ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 14

23.04.2021թվական

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Ջրային կոմիտե նախագահի 08.02.2021թ.-ի թիվ 01/08/297-2021 գրությունը և 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության կառավարության պատվերով գերմանական CES ու տեղական <<ՋՐՏՈՒԿ>> ՍՊԸ-ի կողմից մշակված <<Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերի ջրամատակարարաման և ջրահեռացման համակարգերի բարելավման>> ներդրումային ծրագիրն ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հավանություն տալ ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի առաջարկին և ԱՄՆ զարգացման գործակալության կողմից իրականացվելիք ներդրումային ծրագրին՝ հետագայում Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքում կառուցվող ջրամատակարարման համակարգը գույքի նվիրատվությամբ հանձնվի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին, որն իր հերթին կհանձնի վարձակալության "Վեոլիա Ջուր" ՓԲԸ-ին, որից հետո Սայաթ-Նովա համայնքը կավելացվի ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ցանկին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 13

23.04.2021թվական

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատոսք բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերը աճուրդային եղանակով օտարելու մասին:

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող 0.46938 հա, 0.63559 հա, 0.13578 հա գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեսք հողամասերը և բնակավայրերի հասարակական կառուցապատման՝ 0.2045 հա հողամասը օտարել աճուրդային եղանակով, օտարվող հողամասի գինը սահմանել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով, մեկնարկային գինը սահմանել ըստ հետևյալ ծածկագրերի և լոտի՝

Գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեսք

Լոտ 1. Ծածկագիր 03-082-0103-0024; 0.46938 հա մեկնարկային գինը 31700 ՀՀ դրամ

Լոտ 2. Ծածկագիր 03-082-0036-0001; 0.63559 հա մեկնարկային գինը 42950 ՀՀ դրամ

Լոտ 3. Ծածկագիր 03-082-0111-0021; 0.13578 հա մեկնարկային գինը 9200 ՀՀ դրամ

Բնակավայրերի՝ հասարակական կառուցապատման

Լոտ 1. Ծածկագիր 03-082-0351-0038; 0.2045 հա մեկնարկային գինը 2,496.950 ՀՀ դրամ

Արարատի մարզ ՍայաթՆովա համայնք, Մասիս-Էջմիածին խճուղի թիվ 11

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12

23.04.2021թվական

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով Ծ. Պողոսյանին օտարելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ «Ինքնակամ կառույցների օրինականացման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 18–րդ հոդվածի 21 և 42 կետերի համաձայն և հիմք ընդունելով Սայաթ-Նովա համայնքի բնակիչ՝ Ծերուն Այվազի Պողոսյանի 23.03.2021թ.-ի դիմումը:

ՈՐՈՇԵՑ

Տալ հավանություն Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում օրինական ճանաչված՝ 44.10 քմ ինքնակամ կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ, բնակավայրերի՝հասարակական կառուցապատման 0,01533 հա հողամասը /հասցե ՝ Նոր թաղամաս 14-րդ փողոց թիվ 15 կադաստրային ծածկագիր՝ 03-082-0003-0049/ ուղղակի վաճառքով օտարել համայնքի բնակիչ՝ Ծերուն Այվազի Պողոսյանին:

Հասարակական նշանակության ՝ 44.10 քմ արտաքին չափերով շինության համար օտարման գին սահմանել ՝ 479 860 / չորս հարյուր յոթանասունինն հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:

Դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ բնակավայրերի՝ հասարակական կառուցապատման 0,01533 հա հողամասի համար օտարման գին սահմանել՝ 238462 / երկու հարյուր երեսունութ հազար չորսհարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11 Ն

23.04.2021թվական

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման Մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇԵՑ

Ֆոնդային բյուջեի 8.2.3 համայնքային մշակույթի և ազատ ժամանց հատվածից 5112 հոդվածը պակասեցնել 3.000.0հազ. դրամով /երեք միլիոն դր./ և այն ուղղել 8.2.3 հատվածին 5134 հոդվածը 3.000.0հազ. դրամով /երեք միլիոն դր./:

Վարչական բյուջեի 11.1.2 պահուստային ֆոնդի 4891 պահուստային միջոցներ հոդվածը պակասացնել 200.0 հազ. դրամով /երկու հարյուր հազար դր./ և այն ուղղել 1.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ հատվածին 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածին 200.0 հազ. դրամ /երկու հարյուր հազար դր./

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10

23.04.2021թվական

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅՆԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Տալ հավաություն քաղաքացի՝ Արփինե Մկրտիչի Մուրադյանի խնդրանքին և նրա սեփականության իրավունքով պատկանող 0,9542 հա գյուղատնտեսական վարելահողը՝ 03-082-0105-0046 ծածկագրի տակ գտնվող, փոխել դարձնել արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 09

23.04.2021թվական

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական Ինքնակառավարման Մասին օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետի և 66 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Թույլատրել Սայաթ-Նովա համայնքի սեփականություն հանդիսացող 03-082-0076-0001 ծածկագրի տակ հաշվառված 0.1233 հա (հասցե Արարատի մարզ Սայաթ-Նովա համայնք Ա.Բակուցի փողոց թիվ 3/3) նպատակային նշանակության՝ բնակավայրերի, գործառնական նշանակության կամ հողատեսք՝ հասարակական կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով 651050 /վեց հարյուր հիսուն մեկ հազար հիսուն / ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել վարձակալ՝ Վարդան Հակոբյանին և 03-082-0113-0027 ծածկագրի տակ հաշվառված 0.28 հա գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեսքհողամասը կադաստրային արժեքով 18900 /տասնութ հազար ինն հարյուր/ ՀՀ դրամով ուղղակի վաճառքով օտարել վարձակալ՝ Ժորիկ Ապրեսյանին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 08

23.04.2021թվական

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով <<Բիգամա-Ֆրուտ>> ՍՊԸ-ին օտարելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ «Ինքնակամ կառույցների օրինականացման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> օրենքի 18–րդ հոդվածի 21 և 42 կետերի համաձայն և հիմք ընդունելով <<ԲԻԳԱՄԱ-ՖՐՈՒՏ>> ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն՝ Գալուստ Վոլոդյայի Մարանդյանի 29.01.2021 թվականի դիմումը ավագանին

ՈՐՈՇԵՑ

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկին՝ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքում Մասիս-Զորակ խճուղի 1-ին փակուղի թիվ 03 հասցեում գտնվող <<ԲԻԳԱՄԱ-ՖՐՈՒՏ>> ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ի կողմից կառուցված ձկնաբուծական տնտեսությունում, /կադաստրային ծածկագիր՝ 03-082-0122-0044/ օրինական ճանաչված՝ 11618.1 քմ կառույցները (անշարժ գույքը) և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ նպատակային նշանակությունը՝ ջրային, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը ՝ ջրային 2.33822 հա հողամասը ուղղակի վաճառքով օտարել <<ԲԻԳԱՄԱ-ՖՐՈՒՏ>> ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ-ին:

Արտադրական նշանակության 11618.1 քմ արտաքին մակերեսով շինությունների օտարման գինը սահմանել 19,983,132/ տասնինը միլիոն իննհարյուր ութսուներեք հազար մեկ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ:

Ջրային նպատակային նշանակության 2.33822 հա հողամասի օտարման գինը սահմանել 12,345,810 /տասներկու միլիոն երեքհարյուր քառասունհինգ հազար ութհարյուրտաս/ ՀՀ դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, sayat.nova.81@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 07

23.04.2021թվական

23.04.2021Թ-ի ԹԻՎ-03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել 23.04.2021թ-ի թիվ 03 նիստի օրակարգը

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով << Բիգամա-Ֆրուտ>> ՍՊԸ-ին օտարելու մասին:
2. Վարձակալության հիմունքներով տրված հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին
3. Ա. Մուրադյանի սեփականության իրավունքով տրված գյուղատնտեսական հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
4. 2021թ-ի համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով Ծ. Պողոսյանին օտարելու մասին:
6. Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝ այլ հողատեսք և բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերը աճուրդային եղանակով օտարելու մասին:
7. Ջրամատակարարման համակարգի գույքը նվիրատվության տալու մասին

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Զարգարյան Կամո			
Խաչատրյան Վլադիմիր			
Պետրոսյան Վազգեն			
Սերոբյան Լևոն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ